ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/71

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև բողոքներ քննող անձը) քննելով «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից 18.05.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Ագարակ» ԲԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Ագարակ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 18.05.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ կարիքների համար կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգին (այսուհետև՝ Ընթացակարգ) 13.04.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել «Ագարակ» ԲԲԸ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի /այսուհետ՝ հանձնաժողով/ 16.04.2018թ. ժամը 09:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2.5-րդ կետի համաձայն՝ «Արսեվ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով

սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը, և ֆինանսական չափորոշիչը, սակայն որպես հայտի ապահովում մասնակցի կողմից ներկայացված բանկային երաշխիքի մեջ որպես բենեֆիցիար նշված է ՀՀ ֆիմնանսների նախարարությունը:

Նույն արձանագրության 2.8 կետի համաձայն՝ «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը, և ֆինանսական չափորոշիչը, սակայն որպես հայտի ապահովում մասնակցի կողմից ներկայացված բանկային երաշխիքի գործողության ժամկետը սկսվում է հայտերի բացման օրվանից սկսած, սակայն մասնակիցը հայտը ներկայացրել է բանկային երաշխիքում նշված գործողության ժամկետից շուտ և գնման ձևը հրատապ մրցույթի փոխարեն նշել է բաց մրցույթ:

Նույն արձանագրության 5-րդ կետով հանձաժողովը որոշեց «Ագարակ» ԲԲԸ-ի և մի շարք այլ մասնակիցների կողմից ներկայացված հայտերի բավարարման կամ մերժման հարցում «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործունեությունը ժամանակավորապես կասեցնել և գնման ընթացակարգի հետագա ընթացքը ապահովելու համար պարզաբանման նպատակով գրությամբ դիմել ՀՀ ֆինանսների նապխարարությանը:

Հանձնաժողովի 07.05.2018թ. թիվ 3 արձանագրությամբ հանձնաժողովն արձանագրեց, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հարցի կարգավորման համար հստակ պարզաբանում չի ներկայացվել, և որոշեց ուսումնասիրել նմանատիպ հարցերի վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/47 որոշումը:

Նույն արձանագրության 2-րդ կետով հանձնաժողովը որոշեց «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել հրավերի պահանջներին չհամապատասխանող:

Չնայած այն հանգամանքին, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի /այսուհետ՝ հանձնաժողով/ 16.04.2018թ. ժամը 09:30-ին կայացած նիստի թիվ 2 արաձանագրության 2.5 կետով «Արսեվ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում արձանագրվել է անհամապատասխանություն՝ այն է որպես հայտի ապահովում մասնակցի կողմից ներկայացված բանկային երաշխիքի մեջ որպես բենեֆիցիար նշված է ՀՀ ֆիմնանսների նախարարությունը, հանձնաժողովը 07.05.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով որոշեց «Արսեվ» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղը զբաղեցրած մասնակից :

Բողոքի իրավական հիմքերը և ապացույցները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընթացակարգի հրավերի 7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:

Հրավերի 7.4 կետի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

«Ագարակ» ԲԲԸ -ի կողմից Ընթացակարգի հրավերի 7.1 կետով սահմանված կարգով ներկայացվել է հայտի ապահովում՝ 13.04.2018թ. թվագրված բանկային երաշխիքի ձևով, որի չափը հավասար է «Ագարակ» ԲԲԸ-ի գնային առաջարկի հինգ տոկոսին: Երաշխիքը գործում է 16.04.2018թ. մինչև 05.09.2018թ. ներառյալ, այսինքն, երաշխիքի գործողության ժամկետը կազմում է 143 օր:

Հաշվի առնելով վերը նշվածը, գտնում ենք, որ հանձնաժողովի կողմից հայտը մերժելու պատճառաբանությունը, այն է՝ բանկային երաշխիքի գործողության ժամկետը սկսվում է հայտերի բացման օրվանից սկսած, սակայն «Ագարակ» ԲԲԸ -ի կողմից հայտը ներկայացվել է բանկային երաշխիքում նշված գործողության ժամկետից շուտ և գնման ձևը հրատապ

մրցույթի փոխարեն նշել է բաց մրցույթ, անհիմն է, քանի որ «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված երաշխիքի գործողության ժամկետը սկսվում է 16.04.2018թ.-ից, և ներառում է Հրավերի 7.4 կետով սահմանված՝ 90 (իննսուն) աշխատանքային օր ժամանակահատվածը:

Ինչ վերաբերում է Հանձնաժողովի 16.04.2018թ. ժամը 09:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետով արձանագրված մեկ այլ հանգամանքին՝ («Ագարակ» ԲԲԸ -ի կողմից գնման ձևը հրատապ մրցույթի փոխարեն նշել է բաց մրցույթ), ապա գտնում ենք, որ նշված հանգամանքն, ըստ էության, չի կարող խոչընդոտ հանդիսանալ շահառուի կողմից հայտի ապահովման գումարի գանձման համար, ուստի և հայտը մերժելու նմանօրինակ պատճառաբանությունը կրում է ձևական բնույթ և անհիմն է:

Գտնում ենք, որ «Ագարակ» ԲԲԸ -ի կողմից ներկայացված բանկային երաշխիքը, հետևաբար նաև վերջինիս հայտը, պետք է Հանձնաժողովի կողմից գնահատվեին Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Միաժամանակ գտնում ենք, որ «Արսեվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ենթակա է մերժման, քանի որ վերջինիս հայտում որպես շահառու (բենեֆիցիար) նշվել է ՀՀ ֆինանսների նախարարությունը, մինչդեռ մասնակցի կողմից ներկայացված երաշխիքը հանդիսանում է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի (բենեֆիցիար) և «Արսեվ» ՍՊԸ-ի (պրինցիպալ) միջև կայանալիք մրցույթի Պրինցիպալի ապահովումից բխող պարտավորությունների կատարման ապահովում»:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է.

1. Պարտավորեցնել «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «Արսեվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանող գնահատելու մասին համապատասխան որոշում:

2. Պարտավորեցնել «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով կայացրած՝ «Ագարակ» ԲԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

3. Պարտավորեցնել «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «Ագարակ» ԲԲԸ–ին ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ համապատասխան որոշում:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «Ագարակ» ԲԲԸ–ի տնօրեն Կարապետ Բարսեղյանը:

2. <u>ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Ագարակ» ԲԲԸ–ի կողմից 18.05.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 29.05.2018թ. թիվ 1/18-2/28540-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով հրատապ բաց մրցույթով ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի վարչական շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների գնման ընթացակարգի մասնակից «Ագարակ» ԲԲԸ-ի բողոքի վերաբերյալ տեղեկացնում եմ հետևյալը՝

«Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնահատող հանձնաժողովը 07.05.2018թ. թիվ 3 որոշմամբ մերժել է, քանի որ «Ագարակ» ԲԲԸ-ն որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքի մեջ բենեֆիցար նշել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին:

Միաժամանակ տեղեկացնում եմ Ձեզ, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքում, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման մեջ, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի կողմից հաստատված հրավերի օրինակելի ձևերում նշված չէ, թե որպես հայտի ապահովում բանկային երաշխիքի ներկայացման դեպքում բենեֆիցարը ով է հանդիսանում և այն հանգամանքը, որ ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնահատող հանձնաժողովը գրավոր դիմել էր ՀՀ ֆինանսների նախարարությանը վերոհիշյալ հարցի պարզաբանման նպատակով և ՀՀ ֆինանսների նախարարությունից պատասխան գրությամբ չի ստացել բարձրացված հարցի պատասխանը, գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է նմանատիպ հարցերի վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց որոշումները և որոշում կայացնելիս առաջնորդվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/47 որոշմամբ»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Գուրգեն Ղազարյանը:

3. <u>«Արսեվ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ԳԲԽ-ԷՍ-2018/71 բողոքի քննության շրջանակներում որպես երրորդ անձ ներգրավված «Արսեվ» ՍՊԸ-ն 29.05.2018թ. գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է.

««Ագարակ» ԲԲԸ-ն (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) 18.05.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Սարգսյանին ներկայացված թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/71 բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ կարիքների համար կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգին /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ 13.04.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել «Ագարակ» ԲԲԸ-ն:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի /այսուհետ՝ հանձնաժողով/ 16.04.2018թ. ժամը 09:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 5 կետի՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Ագարակ» ԲԲԸ-ի և մի շարք այլ մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատման նպատակով «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործունեությունը ժամանակավորապես կասեցնել և գնման ընթացակարգի հետագա ընթացքը ապահովելու համար պարզաբանման նպատակով գրությամբ դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Այնուհետև, 07.05.2018թ. թիվ 3 արձանագրությամբ հանձնաժողովն արձանագրեց, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հարցի կարգավորման համար հստակ պարզաբանում չի ներկայացվել, և որոշեց ուսումնասիրել նմանատիպ հարցերի վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ պարոն Մ. Անանյանի կողմից կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/47 որոշումը:

Նույն արձանագրության 2-րդ կետով հանձնաժողովը որոշեց «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել հրավերի պահանջներին չհամապատասխանող:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2018թ. թիվ 3 արձանագրության 3-րդ կետով որոշեց «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Բողոքաբերը որպես բողոքի իրավական հիմքեր մատնանշել է՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 32-րդ հոդվածի 1-ին մասերը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը և Ընթացակարգի հրավերի 7.4 կետը:

«Ագարակ» ԲԲԸ-ի կողմից Ընթացակարգի հրավերի 7.1 կետով սահմանված կարգով ներկայացվել է հայտի ապահովում՝ 13.04.2018թ. թվագրված բանկային երաշխիքի ձևով, որի

չափը հավասար է «Ագարակ» ԲԲԸ-ի գնային առաջարկի հինգ տոկոսին: Երաշխիքը գործում է 16.04.2018թ. մինչև 05.09.2018թ. ներառյալ, այսինքն, երաշխիքի գործողության ժամկետը կազմում է 143 օր:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ բողոքաբերը գտնում է, որ հանձնաժողովի կողմից հայտը մերժելու պատճառաբանությունը, այն է՝ բանկային երաշխիքի գործողության ժամկետը սկսվում է հայտերի բացման օրվանից սկսած, սակայն «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից հայտը ներկայացվել է բանկային երաշխիքում նշված գործողության ժամկետից շուտ և գնման ձևը հրատապ մրցույթի փոխարեն նշել է բաց մրցույթ, անհիմն է, քանի որ «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված երաշխիքի գործողության ժամկետը սկսվում է 16.04.2018թ.-ից և ներառում է Հրավերի 7.4 կետով սահմանված՝ 90 /իննսուն/ աշխատանքային օր ժամանակահատվածը:

Ինչ վերաբերվում է Հանձնաժողովի 16.04.2018թ. ժամը 09:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետով արձանագրված մեկ այլ հանգամանքին՝ /«Ագարակ» ԲԲԸ-ի կողմից գնման ձևը հրատապ մրցույթի փոխարեն նշել է բաց մրցույթ/, ապա գտնում ենք, որ նշված հանգամանքն, ըստ էության, չի կարող խոչընդոտ հանդիսանալ շահառուի կողմից հայտի ապահովման գումարի գանձման համար, ուստի և հայտը մերժելու նմանօրինակ պատճառաբանությունը կրում է ձևական բնույթ և անհիմն է:

Բողոքաբերը գտնում է, որ «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքը, հետևաբար նաև վերջինիս հայտը, պետք է Հանձնաժողովի կողմից գնահատվեին Ընթացակարգի պահանջներին համապատասխանող, իսկ «Արսեվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ենթակա է մերժման, քանի որ վերջինիս հայտում որպես շահառու /բենեֆիցիար/ նշվել է ՀՀ ֆինանսների նախարարությունը, մինչդեռ ըստ Բողոքաբերի պետք է լիներ ՀՀ ԿԱ ՊԵԿ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքաբերը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է.

1.Պարտավորեցնել «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «Արսեվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանող գնահատելու մասին համապատասխան որոշում:

2.Պարտավորեցնել «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով կայացրած՝ «Ագարակ» ԲԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

3. Պարտավորեցնել «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «Ագարակ» ԲԲԸ-ին ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ համապատասխան որոշում:

Առարկության իրավական հիմքերը և հիմնավորումները.

ա) «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված բանկային երաշխիքում որպես բենեֆիցիար՝ ՀՀ ֆինանսների նախարարություն նշված լինելու վերաբերյալ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Սույն ընթացակարգին մասնակցելու նպատակով «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 13.04.2018թ. տրամադրված թիվ 195-48 բանկային երաշխիքը, որտեղ որպես բենեֆիցիար նշված է ՀՀ ֆինանսների նախարարություն:

Վերոգրյալի հետ կապված հայտնում ենք, որ 17.04.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 29.03.2018թ. ներկայացված թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/47 բողոքի քննության վերաբերյալ կայացրած որոշմամբ մերժել էր ներկայացված բողոքը՝ այն հիմնավորմամբ, որ «Գազկոմշին>> ՍՊԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքում, որպես բենեֆիցար նշվել էր ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան, մինչդեռ պետք էր նշվեր ՀՀ ֆինանսների նախարարություն:

Այսինքն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/47 որոշմամբ գտել է, որ գնման ընթացակարգերի շրջանակներում որպես հայտի ապահովում ներկայացվող բանկային երաշխիքում, որպես բենեֆիցար պետք է նշվի ՀՀ ֆինանսների նախարարությունը: Վերոհիշյալ որոշմամբ արձանագրվել է, որ պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում՝ որպես բենեֆիցիար պետք է նշվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, ինչը ամրագրվել է ընթացակարգի հրավերով, մինչդեռ «Գազկոմշին» ՍՊԸ-ն որպես բենեֆիցիար ՀՀ ֆինանսների նախարարության փոխարեն նշել է պատվիրատուին՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին և նման հայտը ենթակա է մերժման:

Ըստ վկայակոչված որոշման՝ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում պայմանագրի ապահովումում՝ ներկայացված բանկային երաշխիքի ձևով, որպես բենեֆիցիար նշվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա¬ությունը, իսկ ՀՀ կառավարության 11.08.2011թ. «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1145-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի ընդհանուր օրինակելի ձև, որը կիրառելի է թե՛ հայտի ապահովում, և թե՛ պայմանագրի ապահովում ներկայացնելիս, ուստի ընթացակարգի հրավերի 10.3-րդ կետով սահմանված պայմանը՝ բանկային երաշխիքի ձևով ներկայացրած պայմանագրի ապահովումում որպես բենեֆիցիար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն նշելու վերաբերյալ, պետք է տարածվի նաև բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման վրա:

Այդ որոշմամբ է առաջնորդվել նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, որը 07.05.2018թ. թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հարցի կարգավորման վերաբերյալ հստակ պարզաբանում չներկայացնելու արդյունքում որոշեց ուսումնասիրել նմանատիպ հարցերի վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/47 որոշումը:

Պետք է նշել նաև, որ վիճարկվող «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի 10.3 կետը ամրագրել է, որ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար նշվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը: Կանխավճարի մարման կարգը սահմանած է պայմանագրի նախագծով:

Ուստի գտնում ենք, որ նման պայմաններում, երբ «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված և հայտի ապահովում հանդիսացող բանկային երաշխիքում որպես բենեֆիցիար նշվել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ հանդիսանում է պատշաճ բանկային երաշխիք և այդ պարագայում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելով՝ գործել է իրավաչափ:

Ուստի Բողոքաբերի դիրքորոշումը այս հարցի կապակցությամբ անհիմն է և «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կարծիքով՝ ենթակա է մերժման:

բ) «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից տրամադրված բանկային երաշխիքում գնման ձևը հրատապ մրցույթի փոխարեն բաց մրցույթ նշելու վերաբերյալ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և /կամ/ հայտի ապահովումը, եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացնելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Գնումների մասին ՀՀ օրենսդրությունը նախատեսում է բաց մրցույթին և հրատապ բաց մրցույթին նվիրված առանձին օրենսդրական կարգավորումներ, որոնց ուսումնասիրության արդյունքում արձանագրվում եմ այդ երկու տեսակի ընթացակարգերի առանձնահատկությունները և տարբերությունները միմյանցից:

ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից վերջինիս կարիքների համար կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, ընդ որում նշված մրցույթի տեսակը, այն է՝ «հրատապ բաց մրցույթը» ամրագրված է տվյալ մրցույթի ողջ հրավերով:

Այսպիսով, «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով հրավերով հայտարարվել է հրատապ բաց մրցույթ, մինչդեռ «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքում նշվել է միանգամայն այլ տեսակի մրցույթ, ինչը հակասում է տվյալ մրցույթի հրավերի պահանջներին, և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի ուժով՝ «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը (բանկային երաշխիքի մասով) ենթակա էր մերժման՝ հրավերի պահանջներին հակասելու պատճառով:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ 17.03.2018թ. «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հաշվապահ Վահե Իսրայելյանի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին է ներկայացվել թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/43 բողոքը, որով վիճարկվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 22.02.2018թ. թիվ 3 արձանագրության 2.3 կետով կայացրած՝ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշման իրավաչափության փաստը, այն է՝ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացված բանկային երաշխիքում նշվել է ««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով հրատապ բաց մրցույթ»,

մինչդեռ ըստ գնահատող հանձնաժողովի՝ բանկային երաշխիքում պետք է նշվեր «բաց մրցույթ», քանզի տվյալ մրցույթը, ըստ հրավերի, հանդիսանում է բաց մրցույթ:

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 03.04.2018թ. կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/43 որոշմամբ՝ Վահե Իսրայելյանի կողմից 17.03.2018թ. ներկայացված բողոքը մերժել է՝ գտնելով, որ Վահե Իսրայելյանի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն բանկային երաշխիքում պետք է նշեր հրավերով նախատեսված «բաց մրցույթ», այլ ոչ թե «հրատապ բաց մրցույթ», ուստի մերժելով «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ:

Ուստի Բողոքաբերի պնդումը այս մասով, թե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով «Ագարակ» ԲԲԸ-ի հայտը գործել է ոչ իրավաչափ՝ մեր կարծիքով նույնպես անհիմն է և ենթակա է մերժման:

գ) «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից տրամադրված բանկային երաշխիքը 13.04.2018թ. տրամադրվելու և միայն 16.04.2018թ.-ից գործելու վերաբերյալ.

Սույն Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Ագարակ» ԲԲԸ-ն հրավերի 7.1 կետով սահմանված կարգով ներկայացրել է հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի ձևով՝ տրամադրված «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 13.04.2018թ.:

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 13.04.2018թ. տրամադրված թիվ 35-150 բանկային երաշխիքի 5-րդ կետի համաձայն՝ երաշխիքը գործում է 16.04.2018թ. մինչև 05.09.2018թ. ներառյալ /երաշխիքի գործողության ժամկետը կազմում է 143 օր, այսինքն հրավերի 7.4 կետով սահմանված 90 /իննսուն աշխատանքային օրից ավել/:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Ընթացակարգի հրավերի 7.4 կետի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ նույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ նույն ընթացակարգը չկայացած

հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Վերոնշվածից երևում է, որ «Ագարակ» ԲԲԸ-ն Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս, այն է 13.04.2018թ.-ին գնահատող հանձնաժողովին է ներկայացրել դեռևս ուժի մեջ չմտած, անվավեր և չգործող բանկային երաշխիք, քանզի ըստ տրամադրված թիվ 35-150 բանկային երաշխիքի 5-րդ կետի՝ տվյալ երաշխիքը գործում է 16.04.2018թ., ուստի և հայտը ներկայացնելու օրը այն դեռևս վավեր չի եղել:

Վերոհիշյալի արդյունքում խախտվել է Ընթացակարգի հրավերի 7.4 կետով սահմանված պահանջը՝ առ այն, որ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

Ուսումնասիրելով վերոնշված փաստերն ու փաստական հանգամանքները, գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նաև այս հիմքով մերժելով «Ագարակ» ԲԲԸ-ի հայտը, գործել է իրավաչափ, քանի որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, նույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ՀՀ կառավարության 04.05.2017թ.թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի և Ընթացակարգի հրավերի 7.4 կետի պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին մերժել «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից 18.05.2018թ. ներկայացված թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/71 բողոքը»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին »Արսեվ» ՍՊԸ-ի տնօրեն Պարույր Դանիելյանը, ինչպես նաև Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

3. **<u>ԳԲԽ-ԷՍ-2018/71 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից 18.05.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 16.04.2018թ. ժամը 9:30-ին կայացած նիստի թիվ 2 և 07.05.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, Պատվիրատուի 29.05.2018թ. թիվ 1/18-2/28540-18

գրությամբ հայտնած դիրքորոշումը, Բողոքի քննությանը որպես երրորդ կողմ ներգրավված «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի 29.05.2018թ. գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ ներկայացված առարկությունները, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 17.04.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/47 որոշումը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ կարիքների համար կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) 13.04.2018թ. մասնակցության հայտեր են ներկայացրել «Ագարակ» ԲԲԸ-ն և «Արսեվ» ՍՊԸ-ն:

Նշված Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Ագարակ» ԲԲԸ-ն որպես հայտի ապահովում ներկայացրել է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 13.04.2018թ. տրամադրված թիվ 33-150 բանկային երաշխիքը, որը, նույն երաշխիքի 1-ին կետի համաձայն՝ հանդիսանում է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցար) և Ագարակ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 16.04.2018թ. կայանալիք «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի Պրինցիպալի ապահովումից բխող պարտավորությունների կատարման ապահովում: Նույն երաշխիքի 5-րդ կետի համաձայն՝ երաշխիքը գործում է 16.04.2018թ. մինչև 05.09.2018թ. ներառյալ:

Հանձնաժողովը 16.04.2018թ. ժամը 09:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության.

- 2.5 կետով արձանագրել է, որ «Արսեվ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն որպես հայտի ապահովում մասնակցի կողմից ներկայացված բանկային երաշխիքի մեջ որպես բենեֆիցիար նշված է ՀՀ ֆինանսների նախարարությունը:

- 2.8 կետով արձանագրել է, որ «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը, և ֆինանսական չափորոշիչը, սակայն որպես հայտի ապահովում մասնակցի կողմից ներկայացված բանկային երաշխիքի գործողության ժամկետը սկսվում է հայտերի բացման օրվանից սկսած, սակայն մասնակիցը հայտը ներկայացրել է բանկային երաշխիքում նշված գործողության ժամկետից շուտ և գնման ձևը հրատապ մրցույթի փոխարեն նշել է բաց մրցույթ:

- 5-րդ կետով որոշել է «Ագարակ» ԲԲԸ-ի և մի շարք այլ մասնակիցների կողմից ներկայացված հայտերի բավարարման կամ մերժման հարցում «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1»

ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործունեությունը ժամանակավորապես կասեցնել և գնման ընթացակարգի հետագա ընթացքը ապահովելու համար պարզաբանման նպատակով գրությամբ դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը:

07.05.2018թ. թիվ 3 արձանագրությամբ հանձնաժողովն արձանագրել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հարցի կարգավորման համար հստակ պարզաբանում չի ներկայացվել, և որոշել է ուսումնասիրել նմանատիպ հարցերի վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/47 որոշումը, որով առաջնորդվելով՝ նույն արձանագրության 2-րդ կետով որոշել է «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել հրավերի պահանջներին չհամապատասխանող, իսկ 3-րդ կետով՝ «Արսեվ» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

«Ագարակ» ԲԲԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով հայտնել է, որ Ընկերությունը Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ներկայացրել է հայտի ապահովում՝ 13.04.2018թ. թվագրված բանկային երաշխիքի ձևով, որի գործողության ժամկետն է 16.04.2018թ. մինչև 05.09.2018թ. ներառյալ, այսինքն, երաշխիքի գործողության ժամկետը կազմել է 143 օր: Ընկերությունը գտնում է, որ հանձնաժողովի կողմից վերջինիս հայտը մերժելու պատճառաբանությունը, այն է՝ բանկային երաշխիքի գործողության ժամկետը սկսվում է հայտերի բացման օրվանից սկսած, սակայն «Ագարակ» ԲԲԸ -ի կողմից հայտը ներկայացվել է բանկային երաշխիքում նշված գործողության ժամկետից շուտ, անհիմն է, քանի որ «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված երաշխիքի գործողության ժամկետը սկսվում է 16.04.2018թ.-ից, և ներառում է Հրավերով սահմանված՝ 90 (իննսուն) աշխատանքային օր ժամանակահատվածը:

Հանձնաժողովի կողմից որպես Ընկերության հայտը մերժելու հիմք արձանագրված մեկ այլ հանգամանքն, ըստ Ընկերության, ոչ էական է և կրում է ձևական բնույթ, քանի որ «Ագարակ» ԲԲԸ -ի կողմից գնման ձևը «հրատապ բաց մրցույթի» փոխարեն նշելով «բաց մրցույթ», չի կատարել որևէ խախտում, որի հետևանքով կարող է վտանգվել կամ կասեցվել շահառուի կողմից հայտի ապահովման գումարի գանձումը: Ընկերությունը գտնում է, որ «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքը, հետևաբար նաև վերջինիս հայտը, պետք է Հանձնաժողովի կողմից գնահատվեին Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Միաժամանակ, Ընկերությունը բողոքով հայտնել է, որ «Արսեվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ենթակա է մերժման, քանի որ վերջինիս հայտում որպես շահառու

(բենեֆիցիար) նշվել է ՀՀ ֆինանսների նախարարությունը, մինչդեռ մասնակցի կողմից ներկայացված երաշխիքը հանդիսանում է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի (Բենեֆիցիար) և «Արսեվ» ՍՊԸ-ի (Պրինցիպալ) միջև կայանալիք մրցույթի Պրինցիպալի ապահովումից բխող պարտավորությունների կատարման ապահովում:

Պատվիրատուի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնել է, որ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով տալ պարզաբանում այն հարցի վերաբերյալ, թե որպես հայտի ապահովում բանկային երաշխիքի ներկայացման դեպքում բենեֆիցարը ո՞վ է հանդիսանում, ինչպես նաև այն հարցի վերաբերյալ, թե արդյոք երաշխիքում գնման ընթացակարգի սխալ նշումը հիմք է հանդիսանում մասնակցի հայտը մերժելու համար, և չստանալով հայցված պարզաբանումները, Հանձնաժողովը որոշել է ուսումնասիրել նմանատիպ հարցերի վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց որոշումները և որոշում կայացնելիս առաջնորդվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացրած որոշումներով, մասնավորապես, թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/47 որոշմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 383-րդ հոդվածի համաձայն՝ երաշխիք տված անձը (բանկը, այլ վարկային հաստատությունը կամ ապահովագրական կազմակերպությունը) այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ, երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան, բենեֆիցիարին վճարել դրամական գումար՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և նույն օրենքով նախատեսված ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերը, բացառությամբ նույն հոդվածի յոթերորդ մասով նախատեսված դեպքերի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք)՝

- 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա:

- 18-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ գնում կատարելու ընթացակարգերն են՝

1) էլեկտրոնային աճուրդը.

2) մրցույթը.

3) գնանշման հարցումը.

4) մեկ անձից գնումը:

• 2-րդ մասի համաձայն՝ մրցույթի տեսակներն են՝ բաց և փակ:

- 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բաց մրցույթի դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը հաշվարկվում է գնումների հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակելու օրվանից: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե արտակարգ կամ չնախատեսված իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ, և հայտերի ներկայացման համար նույն հոդվածի 2-րդ մասով կամ 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված ժամկետի կիրառումն անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել, ապա հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը առնվազն տասնհինգ օրացուցային օր է:

- 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ, եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած, ապա սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնում է դրա բնօրինակը:

- 32-րդ կետի 15-րդ ենթակետի համաձայն՝ եթե պայմանագրով նախատեսվում է կանխավճար, ապա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար նշվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը.

- 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

«ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի 1-ին մասի՝

- 7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:

- 7.4 կետի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ նույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ նույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում(...):

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Արսեալ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքի մեջ որպես բենեֆիցիար նշված է ՀՀ ֆինանսների նախարարությունը:

- «Ագարակ» ԲԲԸ-ն ներկայացրել է հայտի ապահովում՝ 13.04.2018թ. թվագրված բանկային երաշխիքի ձևով, որի գործողության ժամկետ է սահմանվել 16.04.2018թ. մինչև 05.09.2018թ. ներառյալ, այսինքն, երաշխիքի գործողության ժամկետը կազմել է 143 օր:

- «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացրած բանկային երաշխիքում նշված է եղել «բաց մրցույթ» գնման ձևը:

- Հանձնաժողովը հայտերի գնահատման ընթացքում առաջնորդվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/47 որոշմամբ:

Հաշվի առնելով, որ «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքը գործում է 16.04.2018թ. մինչև 05.09.2018թ. ներառյալ, այսինքն, երաշխիքի գործողության ժամկետը կազմում է 143 օր և ներառում է Հրավերի 7.4 կետով սահմանված՝ 90 (իննսուն) աշխատանքային օր ժամանակահատվածը, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքը համապատասխանում է Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ սահմանված պահանջներին:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ «Արսեվ» ՍՊԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքը հանդիսանում է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի (բենեֆիցիար) և «Արսեվ» ՍՊԸ-ի (պրինցիպալ) միջև կայանալիք մրցույթի Պրինցիպալի ապահովումից բխող պարտավորությունների կատարման ապահովում, ուստի որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքում շահառու (բենեֆիցիար) չէր կարող նշվել ՀՀ Ֆինանսների նախարարությունը, քանի որ, Կարգի 32-րդ կետի 15-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար նշվում է ՀՀ Ֆինանսների նախարարությունը, և միայն այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսվում է կանխավճար:

Ինչ վերաբերում է «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքը անբավարար գնահատելու համար հիմք ծառայած մեկ այլ հանգամանքին (գնման ձևը հրատապ մրցույթի փոխարեն նշել է բաց մրցույթ), ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ «հրատապ բաց մրցույթը» Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բաց մրցույթի տեսակ է՝ պայմանավորված արտակարգ դեպքի նախատեսված իրավիճակի առաջացման հետևանքով ծագած գնման անհետաձգելի պահանջով, որի տարբերությունը բացառապես հայտերի ներգրավման համար նախատեսված ժամկետն է:

Բողոքներ քննող անձը միաժամանակ գտնում է, որ Բողոքներ քննող անձ Մ. Անանյանի կողմից կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/17 որոշմամբ արձանագրված փաստական հանգամանքները որևէ կերպ սույն բողոքին վերաբերելի չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

ՈՐՈՇԵՑ

1. «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից 18.05.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:
2. Պարտավորեցնել «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «Արսեվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանող գնահատելու մասին համապատասխան որոշում:
3. Պարտավորեցնել «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2018թ.

ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով կայացրած՝ «Ագարակ» ԲԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

4. Պարտավորեցնել «ՊԵԿ-ՀԲՄ-ԱԾՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «Ագարակ» ԲԲԸ-ին ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ